# ՆՈՐ-ԴԱՐ

№ 108 ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Չորեքշաբթի, 24 Յունիսի 1892 Չորեքշաբթի, 24 Յունիսի ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 108

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր., հատը՝ 5 կոպէկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամէն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամէն լեզուներով։ Յայտարարութիւնների տողին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ

WIEN 14.7.92 10-11 V

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Հասցէները փոխելու համար պէտք է վճարել 7 մարկ եօթը կոպէկանոց կամ 50 կոպէկ։ Նրանք, որոնք հասցէները փոխելու համար որոշած վճարը դեռ չեն ուղարկել, շտապեն ուղարկելու, եթէ չեն կամենում որ համարների առաքումը դադարեցնենք։

Յուլիսի 1-ից բաժանորդ են գրւում «Նոր-Դար»-ին և մինչև 1892 թ. վերջը վճարում են 6 ր.։

Խնդրում ենք «Նոր-Դար»-ի այն բաժանորդներից, որոնք դեռ չեն վճարել իրենց պարտքը, բարեհաճեն ուղարկել իրենց վրայ մնացած ապառիկը։ Նուազով յուլիսն է, բայց կան բաժանորդներ, որոնց վրայ մնում են և՛ անցեալ տարիներից ապառիկներ։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող.— Խոլերայի առթիւ։

Քրոնիկոն.— Պաշտօնական տեղեկութիւններ խոլերայի մասին։ Մի նիստ խոլերայի առթիւ։ Բժշկական դեպարտամենտի կարգադրութիւնը։ Թիֆլիսի թեմի առաջնորդի ոգևորութիւնը։ Գանձակից։ Խոլերայի ազդեցութիւնը։ Էնզէլի-Թեհրանի երկաթուղու խնդիրը։ Աւազակի ձերբակալումը։ Ձրի թէյարան։ Բագուից։ Գանձակից։

Ամփոփ խրատներ խոլերայի դէմ։

Թղթակցութիւններ.— Փիրջամալ գիւղ։

Քաղաքական.— Քաղաքական լուրեր։

Հեռագիրներ։

Բանասիրական — Թիֆլիսից-Ջալալ-օղլի։

Տեղեկատու։

Յայտարարութիւններ։

Թիֆլիս 23 յունիսի 1892 թ.

## ԽՈԼԵՐԱՅԻ ԱՌԹԻՒ

—

Պաշտօնապէս հաստատուած է, որ Թիֆլիսում երևան եկած խոլերան տեղական չէ, այլ ասիական է, cholera asiatica։ Ի պատիւ թիֆլիսցիների պէտք է ասել, որ այն երկիւղը չունին, ինչով որ իրենց յայտնի կացուցին Բագուի ամեն տեղից հաւաքուած բնակիչները, որոնց շնորհիւ այսօր խոլերան տարածուել է և տարածւում է մեր երկրի զանազան կողմերը։

Թիֆլիսի ժողովուրդը խաղաղ է և սպասում է միայն, որ քաղաքիս կառավարիչները հարկաւորը իր ժամանակին գործ դնեն, որպէսզի այդ մահաբեր ախտը ժամանակ չգտնէ բուն դնելու մեր քաղաքում։

Արդարև, խոլերայի առաջն առնելու համար միջոցներ են գործ դնւում և պատրաստւում և այն այնչափով ու եռանդով, որից աւելի արևելեան ժողովրդից կարելի չէ պահանջել։

Խոլերայից պաշտպանուելու և խոլերայով հիւանդ ժամանակ գործ դնելու միջոցների մասին ահա քանի ժամանակ է զանազան հրահանգներ են տպւում թէ առանձին և թէ պարբերական մամուլի միջոցով։

Այժմ էլ քաղաքային վարչութեան տնօրինութեամբ մի նոր հրահանգ է պատրաստուել խոլերայի դէմ պաշտպանուելու համար։

Այդ հրահանգի մէջն էլ քաղաքիս բնակիչներին գեղեցիկ և օգտաւէտ խորհուրդներ են տրւում. օրինակ՝ ասուած է, որ կանաչեղէն, վարունգ չպէտք է ուտել. «պէտք է խմել կօնեակ օղի, կերակուրը միշտ թարմ և լաւ մթերքից պէտք է լինի. տանը պատրաստ պէտք է լինին Հոֆմանի, Բոտկինի և այլ բազմաթիւ հեղուկներ. խմելը պէտք է կարմիր գինի լինի, ի հարկէ լաւիցը։ Վերջապէս պէտք է շաբաթը 2—3 անգամ տաք բաղնիքում (վաննաներ ընդունել) լողանալ...» այդ հրահանգները բոլորն էլ շատ լաւ են և կարծում ենք, որ ամենքն էլ պատրաստ են կատարելու, եթէ դրանց ամենին էլ յատուկ չլինէր մի պակասութիւն, որ ընդհանուր է։

Այդ հրահանգները գրելիս պէտք է ի նկատի առնուէր ժողովրդի իւրաքանչիւր դասակարգը և նրանց ունեցած միջոցները, և դրանց համեմատ առանձին առանձին հրահանգներ յօրինուէր, կամ թէ պէտք է հրահանգ յօրինողները գտնէին այդ հրահանգները գործ դնելու միջոցները։

Ցանկալի էր, օրինակ, իմանալ, թէ Թիֆլիսում քանի մարդ կը գտնուին, որ կարողանան շաբաթը 2—3 անգամ տաք վաննաներ ընդունել. որտեղ է միջոցը և յարմարութիւնը, որ քաղաքիս բնակիչները շաբաթը 2—3 անգամ վաննա ընդունեն։

Խեղճ ժողովուրդը վարունգ, կանաչեղէն չուտէ, ինչ ուտէ. ջուր չխմէ, ապա ինչ խմէ... Հրահանգներ գրել շատ կարելի է, բայց պէտք է այնպիսի հրահանգներ գրել, որ կարելի լինի գործ դնել, և վերջապէս քաղաքային վարչութիւնը հրահանգներ յօրինել տալու փոխարէն աւելի լաւ կանէր, եթէ այդ հրահանգների գոնէ մի մասը ժողովրդին մատչելի անելու միջոցները գտնէր։

Թող չասեն թէ փող չը կայ. փող կը ճարուի. փողը կը տան ունևորները, հարուստները և այդ ոչ թէ մարդասիրական զգացումից, այլ որովհետև իրենց և իրայինների կեանքը թանկ է իրենց համար։

Բնական է, որ նրանց հասկացնեն թէ դրացի դժբաղդութիւնը իւր դժբաղդութիւնն է, և թէ հարուստը կօնեակ խմելով և ամարանոցներում վաննաներ ընդունելով ապահովուած չէ, քանի որ իւր հետ ապրող, իւր դրացին խեղճութիւնից վարունգ է ուտում և կօնեակի տեղ անպիտան ջուր է խմում։

Անհրաժեշտ է, որ հասարակաց սեղանատուններ լինին, խեղճերին ձրի խմիչքներ, դեղեր բաժանուին, միով բանիւ, անհրաժեշտ է, որ չունևոր բանուոր դասակարգի բարեկեցութեան հոգսը առնէ քաղաքը՝ հարուստների օժանդակութեամբ։

Այդպիսով միայն կարող են հրահանգները գործնական նշանակութիւն ունենալ և նպատակին ծառայել։

## ՔՐՈՆԻԿՈՆ

### ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՈԼԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ.

—

ԹԻՖԼԻՍՈՒՄ, յունիսի 2-ին, խոլերայով հիւանդ կար 6 հոգի. հիւանդանոց էին ուղարկուած 2, մեռել են 2, առողջացել է 1 հոգի։ Յունիսի 22-ին հիւանդանոց է ուղարկուած 1, մեռել են 2, մնում են 4 հոգի։ Բայց

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԹԻՖԼԻՍԻՑ-ՋԱԼԱԼ-ՕՂԼԻ *)

—

### IX

Այժմ ուրիշների հետ մենք էլ պիտի կրկնենք, որ Ջալալ-օղլին, ճշմարիտ, հրաշալի գիւղ ունի։ Ո՞վ է եղել, արդեօք այս Ջալալը, որի անուն այս գեղեցիկ վայրերին իւր անունն է տուել։ Մի խաչքար, որ ձորամիջի աջ կողմում այսօր էլ ցից դրած կայ, Շահ-Աբասի օրերից գրուած մի արձանագրութիւն է պահել իւր երեսին։ Նշանակւում է Իրանի նշանաւոր բռնակալի օրերում Ջալալ օղլու օդը հայեր էին շնչում, բայց թէ դրանից յետոյ ինչ է անցել նրա գլխով, գոնէ ինձ յայտնի չէ։ Յայտնի է այն միայն, որ այժմեան Ջալալ-օղլու հիմնարկութիւնն այս դարի սկզբից դէնը չի անցնում, և որ՝ Պարսից հալածանքների երեսից փախած հայերն են առաջին անգամ այստեղ «բաղի առել» — հիմք ձգել։ Ներկայումս Ջալալ-օղլու բնակիչների թիւը երկու տարերից է բաղկացած. 200 տուն հայից և 60 տուն ռուսից, որոնք 29 և 54 թուականի զինուորների մնացորդներից են։ Բացի այդ՝ ամառանից զօրք էլ է մնում այստեղ, որ գիւղին մի առանձին կենդանութիւն է տալիս։ Ջալալ-օղլին նշանաւոր անցեալ է ունեցել. այդ այն ժամանակն էր, երբ սահմանագլուխն Արփաչայն էր։ Այդ ժամանակ աւելի զօրք էր մնում այստեղ, որոնցից Ջալալ-օղլի մեծ փող էր մտնում, թէև միւս կողմից զօրքը ժողովրդի ուշադրութիւնը հեռացնում էր տեղական աւելի հիմնաւոր պարապմունքներից —երկրագործութիւնից։ Եթէ չծաղկի, չի էլ խամրել, Ջալալ-օղլին, քանի որ նա գտնւում է Թիֆլիսը Երևանեան նահանգի հետ միացնող գեղեցիկ առևտրական ճանապարհի վրայ։ Արջագլուի դաշտավայրից, դեռ երեք-չորս վերստ հեռի, այնպէս է թւում, թէ Ջալալ-օղլին առաջիդ է, այն ինչ՝ իսկապէս սարից անկի դաշտավայրից կտրուած է նա խոր, բաւականութիւնից դուրս ժայռակարծ ձորով, որի միջով իւրեն քարերին առլով, փախչում է Դեբեդայ գետը։ Այդ տեսակ տպաւորութիւն նրանից ես ստանում, որ ձորի երկու պատն էլ միատարածի պէս իրար հաւասար են։ Վերջին ռուս-տաճկական պատերազմից առաջ այդ ձորի երեսները կցրուած էր զմռսութիւնների հետ, որոնք իսկոյն վերջացան, հենց որ վառօդը, թին ու քրտինքն սկսեցին գործածել նրա պատերում։ Այժմ կառքը սրնթաց կռունկներով իջնում է ձորը և անցնելով վայրէջ կամրջից, նոյնպէս կամաց կամաց դուրս է գալի հակառակ եզրը։ Ջալալ-օղլին գետի աջ ափին է, նա փռուած է գեղեցիկ հարթութեան վրայ։ Երբ Ջալալ-օղլուց նայում ես դէպի արևմուտք, 5—6 վերստի վրայ, տեսնում ես առաջից Դուալի, թէև կիսով չափ մերկ, բայց գեղեցիկ շղթան, որ 9—10 հազար ոտնաչափ բարձրութեան վրայ հորիզոն է քաշում։ Այդ շղթայից մի քանի ճիւղ զանազան ուղղութեամբ մօտենալով Ջալալ-օղլուն՝ գրաւիչ հովիտներ, սարահարթներ և բլուրներ են գոյացնում, որոնցից մեծ մասն անտառապատ է։ Մի քանի գեղեցիկ հովիտներից վճիտ ու սառնորակ առուներ են բղխում՝ նրանց գեղեցկութեանը նոր զարդ աւելացնելով։ Այդ հովիտներից է Մատուռի ձորը։ Մայիսի վերջերին երբ այստեղ գարունն իւր երիտասարդ հասակն է մտնում,—դէպի այս բլուրներն զբօսանք դուրս գալն ինչ ասես արժէ։ Նշանաւոր է մանաւանդ կաթնահունց Արան-Լաւին Դաղեստանից աղբիւր անմահական ջրով, որ ամառները գովացնում է խառհարների ծարաւը։ Չքնաղ է Տէր Աւետանց գոմերի ձորն իւր գետակով. գեղեցիկ են Ջրի ձորը, Կոնդի Լանջը, Բոլորթայրա դաշտն իւր ցոլքով, Լոռւայ բերդի առաջը, բերդի երկու կողմի ձորերը,—որ մէկն ասեմ. անթիւ են գեղեցիկ վայրերը, որոնցից իւրաքանչիւրը կարող է առանձին նկարագրութեան... Այս հրաշալի վայրերից իւրաքանչիւրին աշակերտներիս հետ այցելութիւն եմ արել, որոնց մանկական աչքերը շատ անգամ են թնդացրել նրանց կենսատու օդը...

Երկրորդական բարձրութիւնները Դուալի առաջով կեռաչքման կազմելով՝ դէպի հարաւ անցնում են տալիս մի մեծ և գեղեցիկ բլուր, որը հիւսիսից բարձր ծածկուած է ծառերով։ Այդ բլուրն Զարխաղնուտ են ասում, իսկ ռուսները՝ Мѣдвежья гора։ Զարխաղնուտի գագաթից յունիսի գեղեցիկ երեկոներին նայել Դուալի երեսին, նրա առաջի չքնաղ հովտին, որի միջով հոսում է Գետաղեւատայ գետակը,—նշանակում է զմայլուել բնութեան հրաշագեղ տեսարաններից մէկով։ Անմոռանալի կլինի այն րոպէն, երբ փոքրիկ աշակերտներս շրջապատուած՝ արեգակի վերջին ճառագայթների տակ նայում էի Դուալայ հովտին... Այդ այն րոպէն էր, երբ մանուկներս ուշքը դարձրել էին բնութեան գեղեցկութեան վրայ, և որ անմիջապէս նրանց անմեղ դէմքերին կարդում էի գեղեցիկի, սիրոյ զգացման արտայայտութիւնը... Այդ սիրուն բլրի գագաթին հին պատմական հետքեր են երևում։ Դէպքից օգտուելով, մի քանի խօսք ասեցի խաւար ժամանակների մասին։—Նայեցէք, մանուկներ, ասացի, այնպիսի ժամանակներ են եղել, որ խաղաղ ապրուստի տէր մարդիկ իրենց նմանների ձեռքից կեանքն ազատելու համար անդադար այսպիսի տեղերում պատսպարուելիս են եղել. տեսէք ինչ տանջանքներով են այդ քարերը կրել... «Միաժամանակ լսում մնալոյ յետ մխիթարական հարցերն՝

—Հին ժամանակները մարդիկ ինչու էին իրար նեղութիւն տալիս։

—Որովհետև ագահ էին։

—Ինչու, նրանք էլ մեզ նման մարդիկ չէին, հարցրեց մէկը։

—Մարդից մարդ զանազանութիւն կայ, հէնց դուք ու փոքրիկ երեխան մին էք։

—Ոչ։

—Ինչու։

—Որովհետև մենք ուսում ենք առել։

—Հենց այդ ուսումն էր պակաս հին մարդկանց է,—խօսքս վրայ բերի։

—Ուրեմն էն ժամանակներում ուսում չկար,—հարցրին մի քանիսը։

—Ուսում որ եղել էր՝ իրար միս կ'ուտէին,—կարճ կապեցի։ Երեխայքը մտածման մէջ ընկան։ Մեր այս գեղեցիկ բլրի հանդէպ, որ քիչ դէպի մէջ է մտնում դաշտավայրի մէջ՝ հեշտացնելով հաղորդակցութիւնը Ջալալ-օղլու ու Դիւլ-ագարակի մէջ, գետի ձախ ափից 3—4 վերստ հեռու բարձրանում է մի ուրիշը—Լալուարայ շղթան՝ որն իւր բարձրութեամբ խոնարհւում է Դուալի առաջ։ Այս շղթան, հարաւից հիւսիս ձգուելով, Ջալալ-օղլու դիմաց կանգ է առնում՝ բաւականին տարածութիւն թողնելով մի պարարտ և ծաղկաւէտ հովտի համար, որ հիւսիսից եզրափակւում է Արջագլուի բարձրութիւններով։ Այս հովտով անցնում է Ուռուտի գետը, որ մի քիչ ներքև՝ Լոռւայ բերդի արևելեան ձորով Դեբեդին է խառնւում։ Այս գետից մի ժամանակ արխ են եղել հանած, որ Կոնդի առաջից Լոռւայ բերդի վրայ գնալիս է եղել։ Դուալի և Լալուարի շղթաներով կազմուած ամենագեղեցիկ հովտի մէջ, որի ամբողջ երկայնութեամբ աջակին խոր և նեղ ձորի միջով խուլ արձագանք տալով փախչում է Դեբեդը, եզրից մօտ մօտ տեղաւորուած են հետևեալ հայ և ռուս գիւղերը՝ 1. Ջալալ-օղլին իւր ռուս սլոբոդկայով, 2. ռուս-Դեմարգեան, 3. հայ-Դեմարգեան, 4. Դիւլ-ագարակ, 5. Հոփարցի, 6 Վարդաբլուր, 7, Կուրթան, 8. Николаев-

---

*) Տես «Նոր-Դար» № 101.

դրանից, Թիֆլիսի բանտում յունիսի 21-ին խոլերայով հիւանդացաւ 1 կալանաւոր և նոյն օրն էլ մեռաւ։

—

**ԶԱՔԱԹԱԼԻ** գաւառապետը հեռագրում է.—Յունիսի 21-ին Զաքաթալում ասխալյան խոլերայով մի հիւանդ է նկատուած, որ յունիսի 19-ին եկել էր Բագուից։

—

**ԲԱԳՈՒԻ** նահանգապետը հեռագրում է.—Յունիսի 19-ին հիւանդանոց են ուղարկուած դարձեալ 28 հոգի, որոնցից 22-ը օտարական, 6-ը տեղացի։ Հիւանդների ընդհանուր թւից հիւանդանոցում մեռել են 28 հոգի, որոնցից 23-ը օտարական են, 5-ը տեղացի. առողջացել են 16 հոգի. հիւանդ մնացել են 128 հոգի, որոնցից 105-ը օտարական են։ Հիւանդանոցից դուրս մեռել են ընդամենը 67 հոգի, որոնցից 52-ը տեղացի են, 15-ը օտարական։ Սալեան քաղաքում յունիսի 18-ին կային 2 հոգի. յունիսի 18-ին և 19-ին հիւանդացել են 8 հոգի, 6-ը օտարական են, 2-ը տեղացի. մեռել են 8 տեղացի։ Բալախանում յունիսի 18-ին հիւանդ մնացել են 5 հոգի. յունիսի 18-ին և 19-ին հիւանդացել են 11 հոգի, 8-ը օտարական, 3-ը տեղացի. մեռել են 8 հոգի, 5-ը օտարական, 3-ը տեղացի. յունիսի 20-ին մնացել են 8 հոգի։ Բացի դրանից, Ղուբայի տրակտի վրայ Ղըզըլ-Բուրուն կայարանում հիւանդացել են 2 հոգի, որոնցից 1-ը մեռել է. Ղուբայի մօտ մեռել է 1 հոգի։

—

**ԳԱՆՁԱԿԻ** նահանգապետը հաղորդում է, որ յունիսի 19-ին Նուխու քաղաքային հիւանդանոցն է ուղարկուած 1 հոգի, մեռել է 1-ը, մնացել են 5 հոգի. հիւանդանոցից դուրս քաղաքում հիւանդացել է մի տեղացի կին և մեռել է. մնում են 2 հոգի։ Նուխու շրջակայքում հիւանդացել են 7 հոգի, որոնցից 5-ը մեռել են։ Բոլոր հիւանդացածները եկել են Բագուից, բացի Նուխում հիւանդացած մի տեղացի կնոջից։ Ջիւանշիրի գաւառում հիւանդացել են 3 հոգի, որոնք բոլորն էլ մեռել են։ Յունիսի 18-ին Գանձակ քաղաքում հիւանդացածը 19-ին մեռաւ։

—

**ԴԱՂՍՏԱՆԻ** զինուորական նահանգապետը հաղորդում է.—Յունիսի 18-ին Բագուից Դերբենդի վրայով Ղազիղումուխի շրջանի՝ իւր հայրենի Խուրուգլի գիւղը վերադարձաւ մի հիւանդ և հետևեալ օրը մեռաւ։ Յունիսի 19-ին երեկոյեան Աստրախանից գնացող մի հիւանդ Կումուխից հինգ վերստ հեռու՝ ճանապարհին մեռաւ։

—

**ԲԱԳՈՒԻ** նահանգապետը հաղորդում է, որ յունիսի 20-ին հիւանդանոց են ուղարկուած դարձեալ 42 հոգի. դրանց թւում 40-ը օտարական են։ Մեռել են 24 հոգի, որոնցից 20-ը օտարական են։ Առողջացել են 9-ը, հիւանդ մնացել են 137 հոգի, որոնցից 119-ը օտարական, 18-ը տեղացի են։ Բացի դրանից, հիւանդանոցներից դուրս մեռել են 60 հոգի, որոնցից 17-ը օտարական են, 43-ը տեղացի։ Բանտում հիւանդացել են՝ 4, մեռել է 1 հոգի։ Երկաթուղու հիւանդանոցում խոլերայի բաժանմունք է բացուած։ Յունիսի 15-ից մինչև 19-ը այդտեղ տարուած են 18 հոգի, որոնցից 7-ը մեռել են բոլորը տեղացիներ։ Բալախանում հիւանդացել են 9-ը, մեռել են 6, մնացել են 11 հոգի։ Ալիստակ քաղաքում հիւանդացել են 5, առողջացել են 2, մնում են 9 հոգի։ Շամախու գաւառում մեռել են 31 հոգի։ Սալեանում մեռել են 2-ը։ Յունիսի 21-ին Բագուում խոլերայից մեռաւ իտալական հիւպատոսի գործակալ Ստեփանինին։

—

**ԴԱՂՍՏԱՆԻ** զինուորական նահանգապետը յուն. 21-ին հեռագրում է, որ յուն. 20-ին առաւօտեան, Պետրովսկում հիւանդացել է մի տեղացի բնակիչ, որը հետևեալ օրը ժամը 6-ին մեռել է։ Բժիշկների ասելով, մահը խոլերայից է առաջացել.

—

Յունիսի 20-ին Թիֆլիսի քաղաքագլխի նախագահութեամբ, քաղաքամասերի առողջապահական խմբերի բժիշկները քաղաքային վարչութեան անդամների հետ միասին նիստ ունեցան և վճռեցին հետևեալը.

1) Խնդրել, որ անդրկովկասեան երկաթուղու կառավարչը կարգադրէ Բագուից եկող բոլոր ուղևորներից տեղեկանալ, թէ Թիֆլիսում որտեղ պէտք է ապրեն նրանք և այդ մասին յայտնել Թիֆլիսի ոստիկանապետին։

2) Արտաքնոցները, կեղտափոսերը և բակերը անվարակելի դարձնելու համար առողջապահական խմբերը խորհուրդ են տալիս գործ ածել չհանգցրած կիր, կրակալժ, պղնձարջասպ, երկաթարջասպ և կարբոլեան թթու. իսկ սուլեմայով անվարակելի դարձնելը պէտք է լինի միայն բժշկի հսկողութեամբ, որովհետև սուլեման թունաւոր է։

3) Թոյլ տալ հասած մրգերի, նոյնպէս և վարունգների վաճառելը, միայն խստացնելով նրանց որակութեան վրայ հսկողութիւնը։

4) Անպայման արգելել խառ-թութ և սեխ վաճառելը։

5) Բոլոր բախկալներին պարտաւորեցնել, որ միրգն ու բանջարեղէնը ծածկեն շղարշով։

6) Խնդրել ոստիկանապետին պրիստավներին առաջարկելու, որ կասկածելի հիւանդութիւնների մասին նախապէս հաղորդեն առողջապահական խմբերի բժիշկներին, որոնք յետոյ, երբ տեսնեն, թէ հիւանդութիւնն անկասկած տարափոխիկ է, կը դիմեն քաղաքային բժիշկ-դեզինֆեկտորին հարկաւոր դեզինֆեկցիան անելու համար։

7) Խնդրել Թիֆլիսի նահանգապետին մսագործներին պարտաւորեցնելու՝ մսերը բերող սայլերը ներկուած լինեն, ներսից ցինկ լինի կպցրած և վրան ռուսերէն ու տեղական լեզուներով գրուած լինի՝ «սայլ միս բերելու համար», նոյնպէս և համապատասխան համարներ ունենան։

---

Բժշկական դեպարտամենտը բժշկական վարչութիւններին կարգադրում է՝

1) Խոլերայի վտանգ եղած նահանգներում քաղաքային և գիւղական դեղատներին պարտաւորեցնել տեղական պահանջներին համեմատ բաւարար քանակութեամբ դեղօրայք ունենալ։

2) Դեղերը վաճառել ոչ թէ ներկայ գներով, այլ այն գներով, ինչքան որ արժեն այդ դեղերն՝ առանց դրանց պատրաստելու համար փողը հաշուելու։

3) Դեղերը կարող են տալ գնողի բերած շշերի մէջ։

4) Դեղատներում դեղերի կանոնաւոր վաճառմանը պարտաւորւում են հսկել նահանգական և գաւառական տեղական բժշկական վարչութիւնները և նրանց ենթարկուող քաղաքային և գիւղական բժիշկները։

—

Յունիսի 22-ին Կօջոր ամարանոցն ուղևորուեց Թեմիս սրբազան առաջնորդ գեր. Մամբրէ եպիսկոպոսը։

—

**ԳԱՆՁԱԿԻՑ.**—Հաստատ աղբիւրից տեղեկացանք, որ Գանձակի համար յաջորդ է նշանակուած Գայիանէ վանքի վանահայր արժ. Գրիգոր ծայրագոյն վարդապետ Ստեփաննոսեանցը։

—

Բագուում շատ խանութներ, «Каспій» ասելով, փակուած են։ Փակուած է նոյնպէս մի այնպիսի խանութ, որպիսին Պօղոսեանինն է։

—

Ռուս դրամատէրերի ձեռքով Էնզէլի և Թեհրանի միջև երկաթուղի շինելու խնդիրը, մայրաքաղաքի թերթերի ասելով, վճռուած է բացասական մտքով։

—

Երկուշաբթի, յունիսի 10-ին քաղաքամասում ոստիկանութիւնը ձերբակալել է Գորու գաւառի Խցէ գիւղի բնակիչ Դաւիթ Փարսադէն աւազակին, որին երկար ժամանակ հետամուտ էին բռնելու։ Աւազակը բռնուած է Ցխինվալի պրիստաւի ցուցմունքով։ Փարսադէնը, «Нов. Об.»-ի ասելով, քիչ աւարառութիւններ և ուրիշ ոճրագործութիւններ չէ կատարել։

—

Նոյն լրագրի ասելով, Թիֆլիսի ոստիկանապետը Պուշկինեան սկուէրում այս օրերս ձրի թէյատուն է բաց անում։ Միևնոյն տեղում տակառով եռացրած ջուր կը լինի դրած գինու հետ խառը՝ չքաւոր մարդկանց ծարաւը յագեցնելու համար։

—

**ԲԱԳՈՒԻՑ.**—Խոլերայի առաջն առնելու համար տեղիս երիտասարդները բաժանելով քաղաքը զանազան մասերի, խումբ-խումբ ման են գալիս տները և ստիպում մաքրութիւն պահպանել։ Ժողովուրդը ամենայն խոնարհութեամբ նրանց ցոյց տուած խորհուրդները կատարում է։

—

**ԳԱՆՁԱԿԻՑ.**—Բագուից խուսափողներով վագոններով տեղափոխուող ամբոխը տեսնելով սարսափի մէջ է ընկնում մեր հասարակութիւնը։ Շատերն որ դեռ համոզուած են, թէ այդ անկոչ հիւրերը անշուշտ չարահամբաւ խոլերան բերում են իրենց հետ մեր քաղաքը։ Տեղիս հասարակութիւնն էլ սարսափած աճապարում է փախչել դէպի լեռնային գիւղերը, որ չենթարկուի խոլերային։ Գանձակի բնակիչներից սակաւ մասն է մնացել քաղաքում։ Մեզ մօտ էլ առողջապահական մասնախմբեր կան, որոնք մտնում են տները, խանութները և հսկում մաքրութիւն պահպանելու վրայ, բայց շատ թոյլ հսկողութիւն է կատարւում. ընդամենը երկու հատ բժիշկներ ունինք վերահսկող այդ գործին։ Փողոցներից և ոչ մէկը չէ ջրւում, թանձրացած փոշին խեղդում է անց ու դարձ անողներին։

—Այս տարի մեզ մօտ հացաբոյսերն առատ են շատ, նոյնպէս առատութիւն են խոստանում մրգերն ու խաղողը։

## ՀԱՄՓՈՓ ԽՐԱՏՆԵՐ ԽՈԼԵՐԱՅԻ ԴԷՄ.

—

Լրագիրների մէջ խոլերայով վարակուելուց զգուշանալու համար և խոլերայի դէմ այնքան բազմաթիւ և բազմազան միջոցներ ու դեղեր են առաջարկուած, որ ամեն մարդ չի կարող մի ամփոփ տեղեկութիւն կազմել՝ թէ որ միջոցը գործադրի։ Թիֆ-

---

ка.—սրանք բոլորը գետի աջ ափին են։ Միւս ափին՝ 9. Ագալակ, 10. Լեջան, 11- Александровка, 12 Ուռուտ, 13 Հայդարբէգ, 14 Привольня. Բացի յիշած ռուս գիւղերից Ջալալ-օղլուց վերև՝ գետի ձախ ափին երկու գիւղ էլ կայ, 1. Ново-Покровъ և 2. Чибухлу. Ասել է թէ՝ Воронцовка-ն ու Михайловка-ն էլ հաշուած՝ Լոռուայ գաւառում 9 ռուս գիւղ կայ։ Այստեղի հայ գիւղերը Գանձակի և Ղազախի գիւղերի նման բազմամարդ չեն։ Ամենամեծ գիւղը Ջալալ-օղլին է, որ 200 տուն ունի, մնացածները 50 կամ 100 տուն ունեն։ Ռուս գիւղացիները, չնայելով հայերից յետոյ են հաստատուել, բայց լաւ տեղեր են գրաւել ու իրենց հանդը պահելու վերաբերութեամբ շատ խիստ են. հանդն ընկած տաւարի հատից մինչև 20—40 կոպէկ չառնեն, բաց չեն թողնիլ։ Գեարգեառ և Ուռուտ ծխական դպրոցներ կան. Գիւլ-ագարակ էլ կար, բայց չգիտեմ՝ փակ է թէ բաց։ Գեարգեառի դպրոցը շատ հինուց է և իւր գոյութեամբ կատարելապէս պարտական է Զաքար Դեմիրխանեանցին, որն այդ գիւղի այժմեան տանուտէրն է։ Չեմ կարող հրապարակով հիացումս չյայտնել այդ բարի մարդին։ Հասարակ գիւղական դասակարգի մէջ հասարակական գործերի վերաբերութեամբ՝ Զաքարի պէս ջերմ, անկեղծ ու հաստատուն սէր ցոյց տուող մարդի դեռ չէի պատահել։ Զաքարն իւր մասնաւոր կեանքի մէջ գառն է. նա անչափ ներողամիտ է դէպի թշնամին, եթէ միայն վնասն իրեն է հասցրել. բայց անողոք է, խիստ և աչարկու՝ եթէ վնասը հասարակական հիմնարկութեան է դիպել։ Զաքարն իւր հոգով ամբողջ սերունդ է կրթել։ Հասարակ մսագործ Թադէոսը Զաքարի հետ ընկնելով՝ նոյնչափ համակրելի մարդ է դարձել։ Կարճ ծխական դպրոցը գեարգեառեցիների բնութիւնը միանգամայն շրջել է դէպի համակրելին, գեղեցիկը... Զաքարի շուքով են գնում Ուռուտի երիտասարդ տանուտէր Գէորգը, նրա երկու սրտակից Պետրոսն ու միւս Գէորգը։ Այս երեք երիտասարդն ուխտել են իրենց գիւղի դպրոցը նախանձելի դիրքի մէջ դնել, և արդէն կիսով չափ իրենց սուրբ նպատակին հասել են։ Ինչպէս այժմ յաջողութեան տամ մի պարտաւելի երևոյթ։ Մեր յիշած հայ գիւղերում ներս. դպրոցն ու ճեմարանն աւարտած երիտասարդներ կան, բայց այդ պարոնները Լոռուայ գիւղերի համար ամենևին գոյութիւն չունին։

### X

Եթէ Կոնդի ասից նայենք,—ամբողջ Ջալալ-օղլին կերևայ թէ մեր ափումն է։ Նրա գեղեցիկ՝ նոր ճաշակով շինած տներն իրենց կարմիր տանիքներով, որոնցից շատերը ծառերի արանքներից են երևում,—մօտաւորապէս Թիֆլիսի կոլոնիայի տպաւորութիւնն են թողնում։ Շինութիւններն անմիջապէս սկսում են քարափի գլխից և, լայն շրջանով տարածուելով դէպի Դուալը, վերջանում են արքունական շինութիւններով, որոնք իրենց տեսքով ու խոշոր մարմնով միւսներից աչքի են ընկնում։ Երևում են այստեղից երեք եկեղեցու գմբէթ, որոնցից մէկը ռուսաց է, և գտնւում է գիւղի մէջ բացուած լայն ու գեղեցիկ հրապարակի վրայ։ Երևում է արքունական այգին, որ ծածկուած է լորի և ակացիա ծառերով։ Ջալալ-օղլեցիք պարապում են առևտրով, անասնապահութեամբ, արհեստով, երկրագործութեամբ և սայլապանութեամբ։ Այստեղ մշտապէս մնում է քննիչ, պրիստաւ. կայ դեղատուն, պոստ-հեռագրատուն. շատերն իրենց տներից վարձ են տանում՝ տալով զինուորականներին, ծառայողներին, իսկ ամառները ամառանոցորդներին։ Այսպիսով՝ Ջալալ-օղլին Լոռուայ համար, մի քաղաք է, որտեղից կարելի է հոգալ բոլոր պէտքերը։ Ցաւալին այն է միայն, որ բաւական թւով օղկուներ կան, ուր շատերը անվայել կեանք են անցկացնում, որի առաջ, սակայն, գիւղի մտածողները ուզում են առնել՝ պակասեցնելով այդ խոչերի թիւը։ Ապրուստն այստեղ շատ աժան է։ 15—18 ռուբլով գերդաստանով կարելի է լաւ ապրել։ Անհրաժեշտ մթերքներից հացը, միսը, եւղը, ձուն, հաւը, ուրիշ տեղերի հետ համեմատած, շատ աժան են. միայն փայտն է մի քիչ թանկ, որովհետև մերձակայ մասում անտառներից իրաւունք չկայ փայտ անել։ Ընտիր գինու չէն արժէ 15 կոպ., օղու տրեցատկէն՝ 10—12 կոպ., և այդ աժանութիւնն է, որ միջոց է տալիս ջալալ-օղլեցիներին այդ խմիչքներից լիովին գործ ածել... Աժան գնով է ծախւում և ձուկ ու կարմիր։ Կան առևտրականներ, որոնք տարեկան, 15—20 հազար րուբլու շրջանառութիւն են անում և, պէտք խոստովանել, բաւական խղճմտանքով։ Ապրում են իրար հետ սիրով և յաճախակի միմեանց մօտ զանազան պատճառներով հրաւէրքներ են սարքում։ Ջալալ-օղլեցին գիտէ ճաշակով սեղան պատրաստել։ Տան կահ-կարասիքը նոր տեսակի են, նիստ ու կացերնին՝ շատ մաքուր։ Հագնում են կէս-եւրոպական և կէս-վրացական ձևով. մանաւանդ կանայքն ու օրիորդները ճաշակով և մաքուր հագնուել գիտեն։ Խօսում են Երևանի բարբառով։ Մէկ էլ՝ չգիտեմ որտեղից սովորութիւն են արել իրար «աղա» ասել։ Այդ յիմար սովորութեամբ դուրս է գալիս՝ որ բոլոր ջալալ-օղլեցիք աղաներ են. բայց այդ սովորութիւնն էլ է սկսել նոր սերնդի մօտ ծաղրի առարկայ դառնալ։ Գիւղական գործերը քննում, վճռում են ընդհանուր ժողովներով, որոնց նախագահում է տանուտէրը. այդպիսով՝ շատ չարիքներից, որոնց ուրիշ տեղեր զոհ են գնում,—ջալալ-օղլեցիք ազատ են։ Փոքրերը մեծերին յարգել գիտեն։ Ընտանեկան կեանքը մաքուր կերպով պահուած է։ Ծծելով կենսատու օդը, խմելով գիւղի կենդրոնում բաց թողած չորս խողովականէ աղբիւրի վճիտ ու առողջարար ջրից,—շատ առողջ են Ֆիզիքապէս։ Իւր կարմիր կաթնախառն գոյնով հարիւր մարդի մէջ էլ լինի, կճանաչես ջալալ-օղլեցին։ Ոչ մի տեղ երեխային այնպէս կայտառ չտեսայ, ինչպէս այստեղ,—կեանքն աղբիւրի պէս քչքչում է... Սակայն՝ այս բոլոր բարիքներով օժտուած Ջալալ-օղլին հաստատ հիմքերի վրայ դրած դպրոց չունի։ Նա զուրկ է հասարակական ամենամեծ ու անհրաժեշտ հիմնարկութիւնից, և սրանով տալիս է իրեն փչացնում, սաստիկ նմանեցնելով լողների առաջ... Այսպիսով՝ Ջալալ-օղլին նման է այն զուգուած հարսին, որ անմեղ հպարտութեամբ տօն օրը ժամ է գնում, բայց այն չի իմանում, որ իւր յետևից ցախաւել կայ կապած։ Արդեօք ով, կամ ինչ հանգամանքներ են Ջալալ-օղլին այս ծաղրելի դրութեան մէջ դրել։ Նա ինքն է ցախաւելն իւր մէջքից կապել, թէ ուրիշ՝ խարդախ ձեռն է այդ օյինը նրա գլուխը բերել...

### XI

Ինձ բերող Փուրգոնը առաւօտեան Ջալալ-օղլի մի խանութի կողքի կանգնեց։ Չեմոդանը կողքիս՝ տակառների վրայ կուչ եկած՝ տխուր հայեացք ձգեցի... Ձեռիս ընդամէնը մի րուբլի էր մնացել... Մի կարճահասակ ծերունի մօտեցաւ և հարցրեց.

—На дорогѣ повозки видали, баринъ? Չգիտեմ, պատասխանեցի, բայց այն եղանակով, որից կարդացւում էր. «Ես ինչի վրայ եմ մտածում, պարզամիտ ծերունի, դու ինչ ես հարցնում»։ Ծերունին փոշմանած հեռացաւ։ Օրը կիրակի էր։ Հեռուից բազմութիւնը հետաքրքրութեամբ նայում էր... Այդ միջոցին մի երեխայ մօտեցաւ փուրգոնին։

—Փոքրիկ, ձայն տուր, կարող ես քահանայի տունն ինձ ցոյց տալ։ Հայ վարժապետի առաջի ծանօթն անշուշտ քահանայ կլինի։ Երեխան ուլիսի քաղաքագլխի յանձնարարութեամբ, առողջապահութեան վերահսկող բժիշկ Վ. Աբրամեանն բժ. Ա. Խասամանովի և բժ. Գ. Սանխմանովի համաձայնութեամբ կազմել է հետևեալ խրատները։

### I.

Խոլերայի երևալուց առաջ գործադրելի միջոցներ։

1) Ամեն մարդ հենց իր օգտի համար պէտք է քաղաքի առողջապահական գործին նպաստի՝ իր տունը, բակ ու գաւիթը, գոմը, արտաքը մաքուր պահել։

2) Աղբ և ամեն տեսակ կեղտոտութիւնները պէտք է առանձին արկղների մէջ հաւաքել և քաղաքից դուրս տանել. աւելի ապահով լինելու համար պէտք է աղբն ու կեղտոտութիւնները ծածկել մի հաստ շերտ չհանգցրած կրով։

3) Արտաքնոցները պէտք է մաքուր ու կարգին պահել և ամեն օր պէտք է անվարակելի դարձնող (մաքրող) դեղեր ածել մէջը։

4) Ջրգանները (կեղտաջրերի փոսերը), աղբափոսերը և առհասարակ ամեն տեսակ կեղտոտութիւնների փոսերը պէտք է նոյնպէս մաքուր պահեն, իսկ նրանց միջի կեղտոտութիւնները նախապէս մաքրել դեղօրայքով անվարակելի դարձնելուց յետոյ, տանել քաղաքից դուրս։

Ծանօթ.—Երբ որ արդէն խոլերան տարածուած կլինի, քաղաքում, կամ շատ մօտ կլինի. աւելի լաւ է այդ կեղտափոսերը չմաքրել, հապա մաքրիչ դեղօրայքով սրսկել և հողով ծածկել։

5) Քաղաքի տարբեր մասերում և գետի ափերին գտնուած ջրհորները պէտք է ծածկել, գոնէ դրանց ջուրը չպէտք է ամենևին գործ դնել լուացքի կամ գետինը ջրջրելու համար, մանաւանդ խմելու համար։ Նոյնպէս պէտք է ծածկել նաև արտաքնոցների և ջրգանների մօտիկ եղած ջրհորները։

6) Եթէ աղբիւրի ջուր չկայ, այն ժամանակ պէտք է գետի կամ ջրհորի ջուր խմել, միմիայն եռացնելուց յետոյ։

Ծանօթ. — Միշտ պէտք է զգուշանալ, որ ներքնուղիների մօտիկ տեղերից ջուր չվերցնեն։

7) 4—5 օրուայ ընթացքում պէտք է խիստ զգոյշ լինել վարակուած տեղերից եկողների հետ հաղորդակցութիւն ունենալիս։

### II.

Ինչ միջոցներ պէտք է գործ դնել խոլերայի ժամանակ։

1) Հենց որ քաղաքում խոլերայի մի դէպք եղաւ, պէտք է վերև յիշուած միջոցներն աւելի ևս ճշտութեամբ պահպանել։

Իւրաքանչիւր ոք պէտք է հոգս տանէ խոլերայից ազատուել. դրա համար հարկաւոր է առանձին ուշադրութիւն դարձնել՝

ա. Բնակարանների վրայ.
բ. Խոհանոցի, սեղանի և թէյի ամանների վրայ.
գ. Ուտելեղէնի և խմելիքի վրայ և
դ. Անձնապահպանութեան վրայ.

Ա. Բնակարան.

8) Պէտք է բնակարանի օդը որքան կարելի է շուտ-շուտ փոխել, մինչև անգամ եթէ բնակարանը մեծ պատուհաններ ունենայ։

9) Որովհետև չորութիւնը խոլերայի ախտը ոչնչացնում է, ուստի պէտք է զգուշանալ բակերը ջրջրելուց, յատակը լուանալուց և սենեակներում թաց սպիտակեղէն պահելուց. յատակը պէտք է լաւ չորացնել. սենեակի յատակը չոր շորով պէտք է սրբել։

Բ. Խոհանոցի ամաններ և թէյի ամանները.

10. Խոհանոցի մաքրութեան վրայ առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել։ Պղնձները գործ ածելուց առաջ պէտք է լուացուեն, ափսէները, բաժակները, գդալները, պատառաքաղներն ու դանակները, իսկ այնտեղ, որտեղ այդ կարելի է, պէտք է չորացնուեն վառարանների վրայ։

11) Անձեռոցները, սփռոցները, թէյի ամանների սրբիչը պէտք է միշտ չոր պահել պահարաններում և այնտեղից հանել միայն գործածելուց առաջ։

12) Ճաշի և թէյի սպիտակեղէնները պէտք է տալ լուանալու միայն այնպիսի լուացարարի, որը այդ սպիտակեղէնները չի խառնել խոլերայով հիւանդների սպիտակեղէնների հետ։

Գ. Ուտելիք ու խմելիք.

13) Խոլերայի ժամանակ ջուր և կաթ կարելի է խմել, միայն նախապէս լաւ եռացնելով։ Հանքային ջրերը կարելի է խմել և չեռացրած։ Իսկ ինչ վերաբերում է արուեստական ջրերին, այդ ջրերը կարելի է վերցնել միայն լաւ գործարաններում, ուր դրանք պատրաստւում են. կարելի է գործ ածել սելթերեան ջուրը. պէտք է խուսափել սառցովայս ջրից, իսկ լիմոնադը մինչև անգամ օգտակար է համարւում։

14) Գինին խորհուրդ են տալիս խմել կարմիրը, խոլերայից առաջ չխմած անձը։ Սովոր մարդը գարեջուր կարող է խմել, միայն քիչ և լաւ դուրս կանգնած. իսկ կվասն աւելի լաւ է գործ չածել, ինչպէս և պաղպաղակը (մարոժեննոյէ)։

15) Խորհուրդ է տրւում խմել թէյ, սուրճ կոնեակով կամ օղիով։ Օգտակար է նոյնպէս ռոմի և շամպանիայի քիչ քանակութեամբ խմելը. լաւ է գործ ածել գրոգ կամ պորտվէյն։

16) Կերակուրը պէտք է դիւրամարս լինի, որպէսզի ստամոքսը չխանգարուի։ Պէտք է քիչ ուտել և յաճախ։ Ամեն բան, ինչ որ գործ է ածւում իբրև կերակուր, պէտք է լաւ եփուած և խորոված լինի։ Անհրաժեշտ է զգուշանալ թաց բանջարեղէն՝ կանաչի, աղցան (սալաթ) կամ վարունգ և այլն ուտելուց։

17) Թաց միրգը կարելի է ուտել միայն մաքուր եփած ջրի մէջ լուացած, իսկ աւելի լաւ է սալիցիլի, կամ լիմոնի, կամ գինեքարի թթուական բաղադրութեան (մի շիշ ջրի մէջ մի թէյի գդալ) մէջ լուացած։

Ծանօթ.—Այնտեղ, որտեղ միջոց չկայ խստիւ կատարել այս նախազգուշութիւնները, աւելի լաւ է նրանք բոլորովին գործ չածեն. մանաւանդ պէտք է հեռու կենալ թութ, ծիրան և սեխ ու ձմերուկ ուտելուց։

18) Պէտք է զգուշանալ նոյնպէս չաղ կերակուր (չաղ միս, դմակ և այլն) ուտելուց, ինչպէս և սառը կերակրից, նմանապէս և այնպիսի կերակրից, որը ծարաւեցնում է (կոլբաս, խոզի միս, աղի ձուկ, աղի պանիր)։ Հացը պէտք է լաւ թխուած լինի։

19) Նախաճաշի կերակրեղէնն, ինչպէս են՝ պանիրը, խաւը, ապուխտը և այլն, պէտք է ամանի տակ ծածկած կամ փաթաթած պահել, որպէսզի վարակուած ճանճեր չնստեն նրանց վրայ։ Խորհուրդ են տալիս հացը դնել վառարանի մէջ, կամ բռնել կրակի բոցի կամ սպիրտի լամպի վրայ կամ թէ չէ պոկել կեղևը։

(Վերջը միւս անգամ)

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԻՐՋԱՄԱԼ գիւղ (Շուշու գաւառ), 12 յուլիսի.—Վաթսունական թուականներից սկսած մինչև ռուս-թիւրքական վերջին պատերազմը Շուշու գաւառի ժողովրդի մէջ ոչ աղքատ էր երևում՝ և ոչ հարուստը, որովհետև այդ տարիներում առատ էր թէ բոժոժը և թէ օղին, որոնք մեր երկրի հարստութիւններն էին կազմում, և գլխաւորապէս ժողովուրդը դրանցով էր փողի երես տեսնում։ Բայց երբ շերամապահութիւնը և շերամապահութեան արդիւնքն ընկաւ (այն ժամանակներում բոժոժը ծախւում էր 70—80 ր., չորացածը, իսկ այժմ թացը 8—10 ր., չորացածը՝ 15—25 ր.,) ժողովուրդն էլ ձեռք քաշեց այդ պարապմունքից. այսպէս էլ բնակիչների ապրուստի համարեա կէս մասը պակասեց։ Իսկ օղեհանութիւնը, որ մեր Ղարաբաղի բոլոր գիւղերի (այնպիսի գիւղեր կան, որոնց միակ ապրուստի միջոցը թթից օղեհանութիւնն է) համար առաջին հարստութիւնն էր կազմում, այժմս բոլորովին և անշահ արդիւնաբերութիւնն է դարձած։

Ինչպէս այս վերջին տարիների ընթացքում վատ է եղել ցանքսերի պտղաբերութիւնը, այնպէս էլ վատ է եղած թթի և խաղողի բերքը։ Միւս կողմից օղեհանութեան վրայ տարուց տարի աւելացած ակցիզի պատճառով, որ այժմս էլ 5—7 կոպէկի է բարձրացրած °/₀-ը, նոյն պատճառով պարապող ժողովուրդն անկարող դարձաւ ինքն իրեն թութ քաշել, օղին իր ձեռքով ծախել։ Ամեն մի գիւղում սահմանակներով օղու կաթսաները ոչնչացան և թութը պուդով ծախելու սովորութիւնն ընկաւ։ Հասարակ օղեհան կաթսաներին փոխարինեցին 3—4 նոր սիստեմի օղեհան գործարաններ, որոնցից յայտնի են եղբ. Խուդաբեանցների և եղբ. Սողոմոնեանցների սպիրտի գործարանները։ Թէ պուդով թութ ծախողները և թէ գնողները միմեանց հետ ինչ եղանակով են առևտուր անում, այդ մասին թողնում եմ մի ուրիշ անգամ խօսելու։ Յիշեալ 3—4 սպիրտի գործարանները համարեա Ղարաբաղի թութն ու խաղողն են քաշում։ Կան և մի քանի հասարակ օղեհան կաթսաներ, որոնց քաշած օղիքը դարձեալ առնում են վերը յիշած յայտնի երկու սպիրտի գործարանատէրերը։ Թէ սպիրտները և թէ օղիքը, բոլորը ծախւում են Թիֆլիսում և այդ տեղից արտահանւում են դէպի Ռուսիա և Կովկասի այլ և այլ քաղաքները։

Շատերն այժմս էլ այն սխալ կարծիքին են, երբ թէ ակցիզի բարձրանալով բարձրանում են և օղու կամ սպիրտի գները։ Միանգամայն անհիմն կարծիք է այդ։ Աչա պարզ և ակներև ապացոյցները, որոնց կը վկայեն գործին տեղեակ բոլոր մարդիկը։

Մինչև ակցիզը մեր Ղարաբաղում չկար, սեփհական այգետէրերն իրենց քաշած օղու կոժը (60 փունտ) ծախում էին միջին թուով 7—8 ր. 50 կոպ.։ Այս գները վաթսուն թուականից մինչև 70 թուականն էին։ Եօթանասուն թուականներից, երբ ակցիզը դրուեցաւ, վեդրոյից 11 կոպ., վերցնելու ժամանակներում, կոժը ծախւում էր 7—8 ր.։ Ակցիզը տարուց տարի բարձրացաւ, բայց օղու գները իրեն տեղում մնացին միևնոյնը, մինչև վերջին պատերազմի ժամանակը, երբ կոժը իրեն տեղում ծախ-

---

բախութեամբ յանձն առաւ։ Մի չափահաս, երևի հարցերս գուշակելով, վրայ բերեց.

—Վարժապետ, տէրտէրը կարծեմ, տանը չի. այդ կողքի խանութը երեսփոխինն է, աւելի յարմար է նրա մօտ գնալ։

—Շնորհակալ եմ, ասացի ու ցած իջայ։ Խանութը լիքն էր ռուս կանանցով, որոնց ամենքից, դափնի յետև, երկու գլուխ էր երևում, միայն չէի իմանում՝ որն է երեսփոխինը։ Մի քիչ ժամանակից յետ մօտեցայ և հարցրի.

—Դո՞ւք էք այստեղի երեսփոխը։

—Ո՛չ, քաղաքավարի պատասխանեց երիտասարդը՝ հետաքրքիր աչք գցելով վրաս։

—Ես այս գիւղի դպրոցի ուսուցիչն եմ, և դուք, որպէս երեսփոխ, նոյն դպրոցի հոգաբարձու՝ դարձայ միւսին, ազգանունս յայտնելով,—ինչ անեմ, որտեղ իջնեմ։ Երեսփոխն իսկոյն չպատասխանեց։—Չէ՞ր կարելի, պարոն, աւելացրի, ձեր խանութում մի քանի ժամով տեղ տալ ինձ մինչև տէրտէրին գտնեմ։ Համաձայնուեց։ Ծառան չեմօդանս ներս բերեց, և մեր երեսփոխը հանգիստ զբաղուեց իր մուշտարիներով, իսկ ես՝ կանանց յետևում նստած՝ սպասում էի... Շատերը հետաքրքրութիւնից ներս էին մտնում, նայում կախսիս ու իսկոյն դուրս գնում։ Վերջապէս, վերջացնելով իր գործը, երեսփոխը ձայն հանեց։

—Ես այլ և՛ս հոգաբարձու չեմ՝ վաղուց եմ հրաժարուել, և ինչպէս հիմի ոչ մի հոգաբարձու չկայ, նորերի հաստատուելուն ենք սպասում։ Հասկանալով երեսփոխի խօսքերի միտքը, պարզ ասեցի.

—Սակայն մինչև նորերի հաստատուելը դուք էք հոգաբարձուն և թեմ. տեսչից էլ ձեզ վրայ նամակ ունեմ։

—Նամակում հօ մեր անունը չի գրած. գրած է «Հոգաբարձութեան»։

—Նշանակութիւն չունի թէ դուք հրաժարուել էք. առայժմ ուրիշ բան եմ ուզում. միայն հանգստանալու տեղ եմ խնդրում, իսկ դուք, որպէս հայ մարդ, որպէս այս գիւղի առաջաւոր մարդ՝ պարտաւոր էք օգնել ինձ։

Երիտասարդ գործակատարը լսում էր մեր խօսակցութիւնը, և նրա երեսին կարելի էր կարդալ կարեկցութեան նշաններ։

—Ես ոչինչ չեմ ասում, պատասխանեց երեսփոխը, 'ի հարկ է, պէտք օգնենք, բայց դպրոցի մասին հոգս քաշելը հոգաբարձուների գործն է, իսկ հոգաբարձութիւն չկայ։

—Դպրոցն այնպէս բան է, որ պէտք բոլորն էլ նրա մասին հոգս քաշեն. դպրոցը հօ միմիայն հոգաբարձուներինը չէ. և էլ ո՞վ է այժմ դպրոցի մասին խօսում. առայժմ ինձ համար մի վերգալու տեղ եմ խնդրում մինչև տեսնենք ինչ է դուրս գալիս։

—Ա՜յ, աղայ, դարձաւ իր գործակատարին, այս տեղերը ո՞ւմ սենեակ կայ, որ վարժապետի համար վարձենք։

—Այժմ անյարմար է սենեակ վարձել, ընդհատեցի խօսքը, ես դեռ չգիտեմ բանն ինչպէս է լինելու. գուցէ ջալալ-օղլեցիք վարժապետ չեն ուզում, սենեակն ում համար վարձենք։

—Հապա ինչ էք ուզում։

—Մ՚ղբայր, ուզում եմ մի տեղ լինի, որ կարողանամ մի երկու, երեք օր մնալ, մինչև տեսնեմ ջալալ-օղլեցին ընդունում է ինձ, թէ խուլ է տալի,—այժմ, կարծեմ պարզ է խնդիրս։

Ո՛չ մի անգամ մարդի երեսից այսպէս կախ ընկած չէի, ինչպէս այժմ, և պատճառն անշուշտ գրպանիս դատարկութիւնն էր։ Տէրեց յուսեթին, և իննը տարուայ հայ ուսուցիչը նայում էր երեսփոխի երեսին։ Տեսնելով որ երեսփոխը չի կարողանում ոչինչ վճիռ կայացնել, խնդրեցի, որ ինձ ցոյց տայ այն քահանայի տունը, որի վրայ յանձնարարական նամակ ունէի թեմ. տեսչից, և որը պէտք կրօնուսոյց լինէր նոյն դպրոցում։ Երեսփոխն աշակերտին հետս դրեց, որ ցոյց տայ։ Մի քանի մաշուած կանաչակին, գլուխը քաշ՝ խանութի ծառայի յետևից գնում էր հայ ուսուցիչը...

—Աչա այն է տէրտէրի տունը, ցոյց տուեց ծառան ու հեռացաւ։ Այդ միջոցին, հակառակի պէս, մի շուն դուրս վազեց և քիչ էր մնում վերարկուս պատէր։ Մաշուած կանաչակին, ուզողի նման փեշին էի անում։ Միաձախկայ կողերից նայում էին այս տեսարանին... Մի երիտասարդ, տեսնելով նոյն դրութիւնս, վազեց, շունը յետ արաւ։

—Ասա՛, սիրելիս, տէրտէրը տա՞նն է։

—Ո՛չ, կնքատանն է։

—Չէ՞ս կարող մի կանչել։

—Ինչու չէ։

—Դէ՛ վազի, շատ ապրես։ Երիտասարդը վազեց տէրտէրի յետևից, իսկ ես մնացի կանգնած՝ գլուխս քաշ արած. Մտքեր են, որ ալեկոծում են... Այդ րոպէն ամենայարմարն էր, որ շունը վազէր, ոտքս բռնէր. բայց գազանը կարծես դրութիւնս էր մտել... Նա հեռու վայր ընկած՝ ակնյառ նայում էր։ Գոնէ թէ մի ժամից յետ երևաց տէրտէրը։ Նրա յաղթանդամ մարմինն ինձ վրայ մի այլ տպաւորութիւն գործեց...

—Ես այս գիւղի դպրոցի ուսուցիչն եմ և ձեզ վրայ էլ թեմ. տեսչից նամակ ունեմ։

—Ափսո՛ս դուք, հառաչանքով պատասխանեց քահանան. այստեղ հաստատ ուսումնարան չի կարող լինել և ո՛չ մի ուսուցիչ իր ռոճիկը լիւ ստացած չի, բացի դրանից բաւական էլ ուշ էք եկել. այժմ աշակերտների մեծ մասը, այն էլ հարուստների որդիքը, մտել են, մի յոյն կայ այստեղ, նրա մասնաւոր ուսումնարանը, և դժուար թէ ձեզ մօտ աշակերտ գայ։

—Այդ նշանակութիւն չունի, տէր-հայր, հասարակութիւնը շուտով ինձ կ՚ճանաչի, և բանն ուրիշ տեսակ դուրս կ՚գայ, ինձ ասացէք այժմ որտեղ պիտի իջնեմ. շուտով մութը վրայ կ՚հասնի, բայց ես տեղ չունեմ։

—Ինձ մօտ տեղ չկայ, եղբայր, պէտք է երեսփոխին դիմել։

—Նրա մօտից եմ գալի. նա էլ էր ասում տեղ չկայ։ Տէր-հայրը լռեց, բայց նրա դէմքից դժուար չէր զգալ այդ լռութեան հետևանքը։

—Հապա ինչ անենք։

—Ես ձեզ եմ հարցնում, դուք ինձ, ասացի տխուր ձայնով.

—Այժմ արի, գնանք ճաշենք. էլի երեսփոխի մօտ պէտք գնանք։ Ճաշելուց յետ տէր-հայրն անմիջապէս ինձ երեսփոխի մօտ տարաւ ու ինքն անյայտացաւ։ Ես նրան միայն երկու շաբաթից յետ պատահեցի, երբ գործերս արդէն կանոնաւոր ընթացք էին ստացել։ Երեսփոխը միայն երեկոյեան դէմ տանից խանութ վերադարձաւ. այդքան ժամանակ սպասում էի նրան։

—Տեղ գտա՞ք, հարցրեց երեսփոխը խանութը մտնելու պէս։

—Ես որ տեղ գտնող էի եղել, էլ ո՞ւր էի ձեզ դիմում։

—Բա տէրտէրն ինչ ասեց։

—Ասեց ինձ մօտ տեղ չկայ, բերեց այստեղ թողեց ու գնաց։

Երեսփոխը լռեց։ Այդ լռութիւնը ես ընդհատեցի, բայց այժմ ուրիշ խօսքերով։ Երեսփոխը կամաց-կամաց սկսեց զգալ։ Նա հրաւիրեց ինձ իր տունը, ուր ամբողջ գիշերը մեր խօսակցութեան նիւթը դպրոցական գործերն էին։ Այդ մի գիշերուայ մէջ բոլորովին փոխուեց երեսփոխը, այնպէս որ՝ երեք օր պատուով պահեց իր տանը, դրամական օգնութիւն հասցրեց, յարմար սենեակ գտաւ, և, առհասարակ, բոլոր կրիտիկական րոպէներում կարևոր օգնութիւն հասցրեց դպրոցական գործին։

Ա. Աղայեան.

(Վերջը միւս անգամ)

ւում էր 10—12 ր.։ Անկասկած պատերազմը վերջանալուց, ինչպէս ամեն բան իրեն առաջուայ գներն ստացաւ, այնպէս էլ օղին։ Ահա քանի տարի է, որ աքցիզը °/₀-ից 5 կոպ. են վերցնում և օղին իրեն տեղում ծախում են 8—9 ր.։ Օղիի գները անխնայ գներով են բարձրացել, այն էլ ոչ թէ ամեն տարի, իսկ աքցիզը՝ եռապատկելով և քառապատկելով։ Սրա վրայ պէտք է աւելացնել և այն, որ բոլոր օղեհանները իրենց սեփական թթից կամ խաղողից չեն քաշում, այլ պտուղով առնում են կամ հայերից կամ թուրքերից։ Ինչպէս վերը յիշեցինք, այժմս սեփական այգեատէրերից առաջուայ օղի քաշողների 1°/₀-ն անգամ չեն քաշում։ Միայն խաղողի ժամանակ թուրքերի այգիներից պտուղերով առնողների թիւը փոքր ինչ աւելանում է, որ ոմանք գինի են շինում և ոմանք՝ օղի էլ են քաշում։ Այդ էլ նրա համար է, որ հայ գիւղացիք աշնանը անգործ չմնալու պատճառով գնում են ժամանակ անցկացնելու։ Երկրորդ՝ սրանից տասնեակ տարիներ առաջ խաղողի խամ թթի այգու գինը, որ 20 ր. էր եղած, այժմս բարձրացած է հարիւրի։ Գործարանում այրելու փայտը, որ իրենք իրենց ծմակներից էին առնում, այժմս հեռաւոր անտառներից են առնում սաժէնը 7—8 ր., Ծառայի (գալիչու) ամսական վարձը կլինէր շատ թանկը 6—7 ր., այժմս 15—20 ր. է, հացն էլ բանեցնողից։ Առաջ որ հայ գիւղերի հացը բաւականաչափ կլինէր և բոլոր բանուորների հացը իրենց տներից կառնէին կամ Աղդամից չուալը (7½ պուդ.) 2 ր. 50 կոպ.—3 ր. կառնէին, այժմս իրենք չունենալով, քաղաքներից են առնում պուդը 1 ր. 20 կոպ.։ Սրանից վրայ եթէ աւելացնենք միւս մանր և պատահական ծախսերը, կըտեսնենք, որ օղին և գինին իրենց տեղերում ինչ գներով որ ծախում են, դրանից աւելի իրենց վրայ է նստած։ Հասարակ օղեհաններին միայն երկու հանգամանք կայ, որ փոքր ինչ ծանր վնասներից ազատ է պահում։ Մէկն այն է՝ որ մշակութեան մի մասն իրենք են կատարում. երկրորդ՝ որ օղի քաշելը ժամանակով (օրերով) են տալիս, դրա համար խեղճերը գիշեր ցերեկ անդադար և անքուն մնալով կարողանում են որոշած քանակութիւնից աւել քաշել, այն էլ՝ եթէ բերքը անվնաս է և մի քանի հանգամանքներ աջող են անցնում, որ աւելացրածը (перекуръ) գանձարանից թաքցւում է սեփական օղեհան այգեատէրերին։ Նոյն իսկ յայտնի սպիրտահան գործարանատէրերն անգամ չորունակ վնասներ են անում, որովհետև նրանց ծախսերն անհամեմատաբար են և խաղողն առնում են պուդը 45—50 կոպ., իսկ թութը խաղողի կէս գնովն են առնում։ Այս տարի էլ Աղդամի շրջակայքի թթենու այգիներում «չալեկայ» կոչուած վարակիչ հիւանդութիւնը միանգամայն ոչնչացրել է թութի միրգը։

«Չալեկայ» կոչուած հիւանդութեան նշաններն են՝ առաջ թթի տերեւի վրայ դեղագոյն բծեր են երևան գալիս. բծերի թիւը օր ըստ օրէ բազմանում է սև գոյն ստանալով. թթենու սաղարթները չորանում թափւում են։ Սաղարթները վարակուելուց և վարակւում են թթի մրգերը՝ դարձեալ չորանում սևանում և թափւում։ Հայերը (օղեհանները) մնացել են շուարուած։ Թթի կէս փողերն էլ վեց ամիս առաջ վճարած լինելով, ոչ քաշելու հնար կայ և ոչ էլ ձեռք քաշելու, առաւել ևս, որ աքցիզը 5-ից բարձրացրած է 6 կոպ.։ Սրա մասին արգէն տեղեկութիւններ են հաղորդել ում որ հարկն է։

Յով. Միրզաբէգ.

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Անգարական «M Hirlap» թերթի ասելով, Սեմիգրադի ռումինիացիների մէջ նոր պատգամաւորութիւն է կազմուել, որ եւրոպական պետութիւններին յայտագիր պէտք է ներկայացնէ ռումինիացիների նեղուած դրութեան մասին։ Պատգամաւորութիւնը ամենից առաջ պէտք է գնայ Ռուսիային։

— Բուլղարական մի լրագիր հաստատում է այն լուրը, թէ Նիցում ձերբակալուած է պրինց Ֆերդինանդի ադյուտանտ Նովիկչու. Լրագիրը հաղորդում է, որ վերջինիս կառավարութեան ձեռքն են ընկել Նովիկչի մօտ գտնուած բոլոր դոկումենտներն և պրինց Ֆերդինանդի մասնաւոր նամակները։

—Լրագիրները հաղորդում են, որ իտալական արտաքին գործերի մինիստր Բրինը և գերմանական մինիստր-նախագահ Կապրիվին Բեռլինում մի քանի խորհրդակցութիւններ են ունեցել, որոնց ժամանակ բազմակողմանի կերպով քննել են եւրոպական քաղաքականութեան վերաբերեալ բոլոր խնդիրները։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### «ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յունիսի. — Յունիսի 20-ին Աստրախանում նորից հիւանդացել են 4, առողջացել է 1, մնում են 19 հոգի։ Իննը փոստ խաբերխատեղում 45 հիւանդ կայ։ Սարատովի մէջ և կից աւանում հիւանդանալու դէպքեր են նկատուած. յունիսի 20-ին հիւանդանոց են ուղարկուած 20 հոգի. բոլոր հիւանդացածները տեղացի բնակիչներ են, բացի մէկից, որ եկել է Պակրովկա աւանից, և յարաբերութիւն չի ունեցել ոչ խոլերայով հիւանդ անձերի և ոչ այն տեղերի հետ, ուր խոլերա կայ։ Հիւանդացածներից մեռել են 2, առողջացել է 1 հոգի։ Միջոցներ են ձեռք առնուած հիւանդութիւնը սահմանափակելու համար։ Մնացած բոլոր նահանգներում հիւանդութիւն չկայ։ Բագւում յունիսի 19-ին հիւանդներ մնացել էին 120 հոգի։ Թիֆլիսում հիւանդացել են դարձեալ 2 հոգի, 1-ը մեռել է։

Լրագիրները հաղորդում են, որ փաստաբանութեան մասին կանոններ մըշակելու համար արդարադատութեան մինիստրութեան կից կազմուած յանձնաժողովը վերջացրել է պարապմունքները և ծրագիրը շուտով իւր յետագայ ընթացքը կ'ստանայ։

ՎԻԵՆՆԱ. — Պրագայի դատարանը Պոժիբրամի հանքում անզգուշութիւնից հրդեհ ձգելու գործի մասին որոշեց հետևեալը. մեղադրեալ Կրեժը, որ ձգել է չհանգցրած պապիրոզը, դատապարտուած է երեք տարի ծանր բանտարկութեան, Կադլեկը—2, իսկ Գաւրլիկը 1½ տարի նրա համար, որ նա ոչ մի միջոց ձեռք չէր առել պապիրոզը հանգցնելու համար։

Պաշտօնակատար խմբ. Մ. ԱԲԵՂԵԱՆ
Հրատարակիչ՝ Ս. ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

Անդրկովկասեան երկաթուղի

Թիֆլիսից Բաթ. գն. պոստ. 6 ժ. 50 ր. եր.։
» » առ. մարդ.—9 ժ. 30 ր. առ.։
Բաթումից Թիֆ. հաս. պ. 9 ժ. 52 ր. եր.։
» առ.-մարդ.—12 ժ. 25 ր. ցեր.։
Թիֆլիսից Բագու գն. 1 ժ. 20 ր. ցեր.։
Բագուից Թիֆլիս հաս. 5 ժ. 50 ր. եր.։
Թիֆլիսից Գանձ. գն. 9 ժ. 20 ր. եր.։
Գանձակից Թիֆլիս հաս. 7 ժ. 30 ր. առ.։

Պոստային կառքերի երթևեկութիւն ռազմա-վիրական տրակտի վրայ։

—

Թիֆլիսից հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորւում է առ. ժամը 8-ին. գիշերում է Մլեթի կայարանում, Վլադիկավկազ հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7½-ին։

Ութ հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղևորւում է կէս օրից յետոյ ժամը 3-ին առանց գիշերելու հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7-ին։

Վլադիկավկազից հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորւում է առ. ժամը 8-ին, գիշերում է Մլեթի կայարանում, Թիֆլիս է հասնում հետևեալ օրը կէս օրից յետոյ ժամը 7½-ին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղևորւում է կէս օրից յետոյ ժամը 3-ին առանց գիշերելու հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7-ին։

Ռուսաց շոգենաւային ընկերութեան։ Երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պոլսի միջև։

Բաթումից դուրս է գնում.

Հինգշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 4-ին, ուղիղ ընթացքով Նովորոսիսկի վրայով։

Կիրակի օրերը, գիշերուայ ժամը 2-ին Աշխանաւ ընթացքով Փոթիի վրայով բոլոր նաւահանգիստները։

Երկուշաբթի օրերը, երեկոյեան ժամը 7-ին Կ. Պոլիս։

Բաթում հասնում է.

Երկուշաբթի օրերը, երեկոյեան, Օդեսայից, ուղիղ ընթացքով։ Ուրբաթ օրերը, առաւօտեան, Օդեսայից, ուղիղ ընթացքով Կերչի և Նովորոսիսկի վրայով։

Կիրակի օրերը, առաւօտեան, Կ. Պոլսից։

—

Պոստային և ապրանքակիր-մարդատար շոգենաւերի երթևեկութիւն Փոթիի, Բաթումի և Օդեսայի միջև։

Փոթի հասնում է.

Պոստային մարդատար շոգենաւը Բաթումից երկուշաբթի օրերը լուսաբացին։

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Օդեսայից կիրակի օրերը երեկոյեան։

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթումից հինգշաբթի օրերը լուսաբացին։

Փոթիից դուրս է գնում.

Պոստային-մարդատար շոգենաւը Օդեսա և Ճանապարհին գտնուած նաւահանգիստները կիրակի օրերը, առաւօտեան ժամը 8-ին։

Պոստային-մարդատար շոգենաւը գործը վերջացնելուց յետոյ երկուշաբթի օրերը Բաթում։

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը Բաթում երեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 10-ին։

Ապրանքակիր - մարդատար շոգենաւը հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 8-ին, Օդեսա և Ճանապարհին գտնուած նաւահանգիստները։

—

Ապրանքակիր մարդատար գիծ.

Բաթումից դուրս է գնում հինգշաբթի օրերը գիշերուայ ժամը 1-ին։

Բաթում հասնում է երեքշաբթի օրերը, ցերեկուայ ժամը 2-ին։

Ապրանքակիր մարդատար շոգենաւերի վրայ ընդունւում են II և III կարգի ուղևորներ և առանց ուտեստի պաշարեղէնի։

Գործակալութիւնը գտնւում է Թիֆլիսի ազ. բանկի շինութեան մէջ №№ 117 և 118։

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԱՒՅՕՎ ԿԵՎՈՐԳԵԱՆՑ
«ԾԻԾԱՂԻ ՏՈՊՐԱԿ»-ի
առաջին գրքի տպագրութիւնը. ուստի խնդրում ենք այն անձանց, որոնց մօտ գտնւում են յիշեալ գրքի բաժանորդաթերթերից, փութով ուղարկեն բաժանորդագրերի հետ ինձ, այս հասցէով «Նոր-Դար»-ի խմբագրատուն դպ. Ս. Շահազիզեանց։
(0-0-0) 5—2.

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C<sup>IE</sup>
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր նաւագնացութիւն Մարսէլից Բաթում երկու շաբաթը մի անգամ չորեքշաբթի օրերը, սկսած 1892 թ. յունուարի 25 ից և Բաթումից Մարսէլլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս։

ԲԱԹՈՒՄԻՑ ԳՆՈՒՄ ԵՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Չորեք. 10/22 յունիսի | շոգենաւ | «Մինգրելիա» | կապիտան | Ժիրուէն |
| » 24 Յունիսի 6 Յուլիսի | » | Անատոլիա | » | Դարրիգ |
| » 8/20 Յուլիսի | » | «Սերկասսի» | » | Բոշէ |
| » 22 Յուլիսի, 3 օգոստոսի | » | «Մինգրելիա» | » | Ժիրուէն |

և այդպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրուայ։

Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան տոմսակները սովորական գնից զիջումով։

Տեղեկութիւնների և բեռների համար ճանապարհորդները թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին—Բաթումում ԳԱՐՍՆԻՕՆԻՆ, Նաբերեժնայա, Թիֆլիսում պ. Վիկտոր դ'Արնօյին, Միջի փողոց, գեներ. Տէր Աստուածատուրեանի նախկին տուն։

Բագւում՝ պ. Սամուէլ Դիլգարեանցին, Կոլիւբակինսկայա հրապարակում։ Նովորոսիյսկում՝ պ. Լուի Րենօյին։

(107) 12—7

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի խմբագրութեան մէջ
Վաճառւում է
ԳԱԼՈՒՍՏ ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆՑԻ
ՆԻՒԹԵՐ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Վերնագրով գիրքը, որ պարունակում է իւր մէջ Պարսկաստանի ԵՐԵՒԵԼԻ ՀԱՅԿԱԶՕՆՆԵՐԻ կենսագրութիւնն ընդ նմին բազմազան և բազմաթիւ տեղեկութիւններ՝ Պարսկաստանի հայոց անգիր պատմութեան վերաբերեալ, այլ և պարսկական արքունեաց և պալատաններքին և արտաքին սովորութիւնների ու կենցաղավարութիւնների նկարագիրը և նրա ներքին գաւառների և ցեղերի մասին կարևոր ծանօթութիւններ։

Այս մեծագին աշխատութիւնը, որ արժանացել է Պոլսում Սահակ-Մեսրոպեան առաջին մրցանակին և բաղկացած է 400 մանրատառ տպագրած երեսներից վաճառւում է այժմ 3 րուբլով, թէպէտ հեղինակի կենդանութեան ժամանակ նշանակուած էր գինը 5 րուբլի։

X—29.

ԼՈՂԱՐԱՆ ԲԱԴԵՆՈՒՄ ՎԻԵՆՆԱՅԻ ՄՕՏ
Ծծմբային-աղի աղբիւրներ (13 հատ 25—36° Ց.)
Լողարանները ամբողջ տարուայ ընթացքում։

Անցեալ տարի 19,308 ճանապարհորդ կար։ Բադենը գտնւում է գեղեցիկ տեղում։ Լողարաններն ամեն յարմարութիւններով և չքեղ։ Ճանապարհորդներն գտնում են հանգստութեան ամարանոցի բոլոր զուարճութիւններն ու յարմարութիւնները։ Նոր կուրհաուզում կոնցերտի մեծ և չքեղ դահլիճ է շինուած, նմանապէս ընթերցարան, ճաշարան, պեստական հեռախօս, ջուրը խմելու համար նոր շինութիւն, ամարային թատրոն և փառաւոր այգի։ Բադենի ջուրը խմելու համար գալիս է Վիեննայի ջրանցքներից։ Պահանջողներին տեղեկութիւններն ուղարկւում են ձրի։

ՋՐԵՐԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

(525, շ. ա). 10—9.

Արդուզարդի ՕԾԱՌԻ և ՀՕՏԱՒԷՏ ապրանքների
ՍԵՊՀԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
ՌԻՉԱՐԴ ՎԻԼԴՏԻ Վարշաւում. արգոյ հասարակութեան առաջարկում է փոշեյին օծառ, անգլիական արիստոկրատիայի օծառ, ճռաւեյին օծառ՝ 12 տեսակ հոտով, Սիւ-դը-Լէտիւ, Տրէֆլ, Դելիկատես։
ԹՈՒՓԱՆՑԻԿ ՕԾԱՌՆԵՐ
Բժշկական օծառներ, գլիցերինի օծառ, կաթնաւոր օծառ, օ-դը-կոլօն Տրիպլ և ատամի էլէքսիր։
Վաճառւում է զուտանոցներում՝ շատ դեղատներում և վարսավիրների մօտ։
30—5.

Կ. Կ. ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՆԻՆԵՐԻ պահեստում
ԲԱԳՈՒ
Ծախւում են ԿԱԽԵԹԻ, ՄԱՏՐԱՍԻ և ԴԵՐԲԵՆԴԻ գինիներ հին և նոր, թէ մեծ քանակութեամբ (տակառներով) և թէ շիշերով։ Գները չափաւոր են։
Ընդունւում են պատուէրներ Ռուսիայի, Կովկասի և Անդրկասպեան քաղաքներից։
Հասցէն. БАКУ
СКЛАДЪ Кавказскихъ винъ
К. К. Меликъ Шахназарянца
(0—0—0) X–45

Дозволено цензурою Тифлисъ 23 го Іюня 1892 г.
Տպարան «Կաւկազ»
Типографія «Кавказъ» Гол. пр., домъ Читахова.